# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք, ԼՈՌՈՒ
ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ԲԱԶՈՒՄ 1 ՓՈՂՈՑ ԹԻՎ 2, Հեռ. (0322) 64109 ,
bazum.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

N 016/109
*09 հունիս 2017թ.*

Կից ներկայացնում ենք Բազում համայնքի ղեկավարի թիվ 33-Ա, 34-Ա, 35-Ա, 36-Ա 37-Ա որոշումները:

Առդիր` 8 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՀՈՒՆԻՍԻ 2017թվականի N 33-Ա

ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Բազում համայնքի ավագանու 27.04.2017թ-ի «06-023-0234-0053» ծածկագրի հողամասը վարձակալության տրամադրելու մասին » թիվ 16-Ա որոշումը, 06.06.2017 թ-ի թիվ 1 արձանագրությունը, ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 76 և 81 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Մրցույթում հաղթող ճանաչված Աիդա Կիրովի Մամյնանին 25 տարի ժամանակով վարձակալության տրամադրել 06-023-0234-0053 ծածկագրի գյուղնշանակության 3-րդ կարգի այլ հողատեսքը /0.06հա/ և կնքել վարձակալության պայմանագիր:

2. Հողամասի պետական գրանցման ծախսերն իրականացնել Աիդա Մամյանի հաշվին:

3. Պայմանագիրը 10 օրվա ընթացքում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման չներկայացնելու դեպքում սույն որոշումը համարել չեղյալ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒՆԻՍԻ 2017թվականի N 34-Ա

## 06-023-0027-0011 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՕՖԵԼՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Օֆելյա Խաչատրյանի կողմից լիազորված անձ քաղաքացի Կարինե Գրիգորյանի դիմումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 43 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Վերականգնել 06-023-0027-0011 ծածկագրի տակ գտնվող 0,11759 հա բնակելի կառուցապատման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1990թ. կառուցված 79.72 քմ մակերեսով նկուղի, 1990 թ. կառուցված 98.31 քմ մակերեսով բնակելի տան և 1990 թ. կառուցված 2.93 քմ մակերեսով կաթսայատան նկատմամբ Օֆելյա Խաչատրյանի սեփականության իրավունքը:
2. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնումսերվիտուտ:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը՝0.11759 հա հողամասն անհատույց սեփականության իրավունքով հատկացնել Օֆելյա Խաչատրյանին և օրենքի ուժով ճանաչել Օֆելյա Խաչատրյանի սեփականության իրավունքը:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝3 փողոց թիվ 17:
6. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռիի մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՀՈՒՆԻՍԻ 2017թվականի N 35-Ա

ՅՈՒՔՈՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, և հիմք ընդունելով դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Յուքոմ ընկերությանը երկաթյա հենասյուներ տեղադրելու նպատակով վեց ամիս ժամկետով տրամադրել շինարարության թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

[illegible]
(ՀՀ մարզ, համայնք)

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N 4 « 7 » 06 2017 թ.

Տրված է կառուցապատող
[illegible] 024319 -ին
(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը,

ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

[illegible] Ф=102մմ; Ա=600մ+800մմ օբյեկտի
(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում՝
(նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման և այլն)

կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների ______ տեղադրման համար:
(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

**1.** Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

**1)** մշակվել են
[illegible] 16157
(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների

կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը) կողմից.

**2)** ստացել են՝ «____»__________ 20__ թ. N_______ փորձագիտական դրական եզրակացությունը

(եզրակացությունները)

(նշել փորձաքննության տեսակը)

կողմից
(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

կամ՝

նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ ________________________
(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

**3)** սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների

________________________________________________ հետ:
(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

**2.** Շինարարական աշխատանքներն իրականացնել

6 ամսվա ընթացքում՝
(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

**3.** Շինարարության վարման մատյանը բաղկացած է _______ էջից, կարված և դրոշմակնքված է ________________________________ կողմից:
(իրավասու մարմնի անվանումը)

**4.** Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են *(լրացվում է N 1 հավելվածի 110-րդ կետով նախատեսված դեպքերում)*

չեն փոփոխվել ________________________________ կողմից
(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի ________________________ և այլ
(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների

________________________________________________ հետ:
(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

**5.** Հատուկ պայմաններ՝

**1)** կառուցապատողը նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

**2)** շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 125-128-րդ կետերով սահմանված պահանջները.

**3)** *(լրացվում է N 1 հավելվածի* 86-րդ կետով *սահմանված դեպքերում)* սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

________________________________________________

________________________________________________ :
(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

**6.** *(լրացվում է N 1 հավելվածի 13-րդ կետով սահմանված դեպքերում)*
Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա ________________________________ համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների)

________________________________________________ քանդման՝
(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին) ________________________________ տրված նույն թույլտվությունը
(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)
նաև քանդման թույլտվություն է:
Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

**7.** Այլ պայմաններ________________________________________________:
(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

**8.** Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկացնում է իրավասու մարմնին:

**9.** Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ________________________ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ ________________ Ա. Լուսաբովյան
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ. Տ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՀՈՒՆԻՍԻ 2017թվականի N 36-Ա

06-023-0010-0007 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՐԳՈ ԱԶԱՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Մ. Խաչատրյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 02,05,1991թ-ի թիվ 2 որոշումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ

1. Վերականգնել 06-023-0010-0007 ծածկագրի տակ գտնվող 0,05562 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի՝ հինգերորդ կարգի անջրդի վարելահողի նկատմամբ Մարգո Ազատի Խաչատրյանի /ծնված 1941թ/ սեփականության իրավունքը:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռիի մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝   ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒՆԻՍԻ 2017թվականի N 37-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդվածներով, Պետական սեփականություն հանդիսացող հողերից Բազում համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված հողերի ՀՀ կառավարության 08/04/2004թ. թիվ 458-Ն որոշումով, ՀՀ Հողային օրենսգրքի հոդվածներով, ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 43 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին 12/04/2001թ. 286 որոշումով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Բազում համայնքում գտնվող և համաձայն ՀՀ Կառավարության 08.04.2004թ-ի թիվ 458-Ն որոշմամբ համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված 06-023-0228-0007 ծածկագրի տակ գտնվող 0.16314 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի 4-րդ կարգի կարգի վարելահողի նկատմամբ ճանաչել Բազում համայնքի սեփականության իրավունքը:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռիի տարածքային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**